12 հուլիսի 2024թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի
տնօրեն՝ Գ. Բաղդասարյանին

Հարգելի Գ. Բաղդասարյան

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024թ.-ի ապրիլի 26-ին կնքված **ԵԲԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/12-13** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը:

2024թ.-ի հուլիսի 12-ին Վաճառողը գրությամբ դիմել է Գնորդին, ըստ որի հրաժարվում է կատարել **ԵԲԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/12-13** ծածկագրով գնման Պայմանագրի 35-րդ չափաբաժնի մասով ստանձնած պարտավորությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները մասնակի չկատարելու հիմքով «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ն հարկադրված է 2024թ.-ի հուլիսի 13-ից Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 67500 (վաթսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի և 45000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ , Հ/Հ 220300126152000)**.

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ -ի

Տնօրեն **Հովիկ Բալյան**